



ՋԻԼԻԶԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

HISTORICAL MONUMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA

THE HISTORICAL MONUMENTS OF JILIZA



ՀՏԴ 72.03
ՊՄԴ 85.11
Ձ 580

Գիրքը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Զիլիզա գյուղի և գյուղամերձ տարածքների շուրջ 10 հնավայրերում պահպանված պատմական հուշարձանների համակողմանի ուսումնասիրությունը (պատմություն, ճարտարապետություն, վիմագրություն):
Հասցեագրվում է ինչպես հայրենի գյուղի պատմությանը նախանձախնդիր ջիլիզացիներին, այնպես էլ ոլորտի մասնագետներին և ընթերցող լայն հասարակությանը:

The book presents the results of an overall research (history, architecture and lapidary inscriptions) into the historical monuments preserved in Jiliza Village (Lori region, Republic of Armenia) and over 10 ancient sites in its vicinity.

Intended for the inhabitants of Jiliza who are very interested in the history of their native village as well as for specialists and the general reader.

Ձ 580 Զիլիզայի պատմական հուշարձանները / ՀԾՈՒ: Եր.: ՀԾՈՒ հիմնադրամ, 2013 - 24 էջ:

Աշխատասիրությամբ
Սամվել Կարապետյան
Էմմա Աբրահամյան
Աշոտ Հակոբյան
Գայանե Մովսիսյան
Հասմիկ Հովհաննիսյան
Պավել Չոբանյան
Արմեն Գևորգյան

Prepared by
Samvel Karapetian
Emma Abrahamian
Ashot Hakobian
Gayane Movsissian
Hasmik Hovhannissian
Pavel Chobanian
Armen Gevorgian

ՀՏԴ 72.03
ՊՄԴ 85.11

Զիլիզա գյուղը գտնվում է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ծոբոփոր գավառում՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում՝ մարզկենտրոն Վանաձոր քաղաքից ուղիղ գծով 48 կմ հյուսիս՝ Լալվար լեռան հյուսիսարևելահայաց անտառածածկ լեռնաճյուղերից մեկի ստորոտին, ծովի մակերևույթից 1105 մ միջին բարձրության վրա:

Ներկայումս գոտ հայաբնակ գյուղն ունի 40 տուն:

Գյուղի պատմական անցյալը պատված է խոր լռության քողով: Նրա մասին լռում են ինչպես հայ, այնպես էլ օտար մատենագիրները, մինչև իսկ դիվանական վավերագրերը¹:

Սակայն, եթե գրավոր աղբյուրները քար լռություն են պահպանում, ապա գյուղի պատմական անցյալը վեր հանելու գործում բավականաչափ առատ նյութ են մատակարարում գյուղում և գյուղամերձ հնավայրերում պահպանված նյութական մշակույթի պատմական տարաբնույթ հուշարձանները:

¹ Նույնիսկ ԺԹ դարին և Ի դարի սկզբին վերաբերող այն վավերագրերը, որտեղ առկա են վիճակագրական գանազան տվյալներ Շուլավերի գործակալությանը ենթակա հայաբնակ գյուղերի մասին, Զիլիզան (մերձակա Չանախչին ևս) երբևէ չեն հիշատակում:

Jiliza is situated at the foot of one of the wooded north-east-facing branches of Mount Lalvar, 48 km north of Vanadzor, the centre of Lori Region of the Republic of Armenia (Tzobopor District of Gugark Province, Armenia Maior), in a straight line, at an average altitude of 1,105 metres above sea level.

At present it is a purely Armenian-inhabited village with 40 houses.



The history of Jiliza remains obscure as the Armenian and foreign historiographers and even the available archive documents keep sheer silence about it.¹

However, unlike written sources, the monuments of material culture preserved in the village and the adjoining sites provide much information concerning the historical past of the village. Thus, they reveal that until the '20s of the 18th century, the territory of present-day Jiliza was occupied by at least five

¹ Neither Jiliza nor the adjacent village of Chanakhchi is mentioned even in the archive documents of the 19th and early 20th centuries, which report various statistical data regarding the Armenian-populated villages within the jurisdiction of the deanery of Shulaver.



Զիլիզա գյուղի տեսքը տիեզերքից և հին գերեզմանոցի կողմից
Jiliza as seen from space and from the old cemetery of the village



Գլուխամիջյան հուշարձանախմբի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից և Լավվար լեռը Շուրաբաթի խաչ սրբատեղիի մոտից
A general view of the monuments of Jiliza proper from the south-west and Mount Lalvar from the sacred site of the Cross of Tolabab

Ի մասնավորի, պարզվում է, որ մինչև ԺԸ դարի 20-ական թթ. ներկայիս Ջիլիզա գյուղի տարածքում զոյություն են ունեցել առնվազն հինգ զուտ հայաբնակ գյուղեր, որոնք բոլորն էլ ավերվել և ամայացել են օսմանցիների արշավանքներով քաջալերված լեզգիների ասպատակությունների հետևանքով: Շուրջ մեկուկես դար անց միայն գյուղատեղիներից երկուսում (ներկայիս Ջիլիզա և Չանախչի գյուղերը) վերստին հաստատվում են սակավաթիվ հայ ընտանիքներ և վերակենդանացնում հնամենի գյուղերը:

Ընդհանուր առմամբ Ջիլիզայի տարածքում և նրա սահմաններին մերձ պահպանված նյութական մշակույթի հուշարձանները ժամանակագրական առումով կարելի է խմբավորել երկու հիմնական մասի: Առաջինները, ի դեմս Չախալաբերդ-Բազաբերդ ամրոցի, Խորակերտի և Խնձորեքսի վանքերի, Դավիթ բեկի ժամ կոչված գյուղատեղիի եկեղեցու², վերաբերում են Ժ-ԺԳ դարերին, իսկ երկրորդ խումբը՝ բաղկացած ավելի մանր, սակայն միաժամանակ ավելի մեծաթիվ հուշարձաններից (գյուղատեղիներ, եկեղեցիներ, գերեզմանոցներ և այլն), ուշ միջնադարին:

ԳՅՈՒՂԱՍԽՁԻ ՀՈՒՇԱՐԶԱՆԱՆՈՒՄԲԸ

Գտնվում է Ջիլիզա գյուղի արևելյան եզրին՝ ծովի մակերևույթից 1111 մ բարձրության վրա (N 41°13'39.84"; E 044°37'48.96"):

Տեղում եղել են միմյանց կից երեք շինություններ: Առաջինը միանավ թաղածածկ հորինվածքով եկեղեցին է³, որի հետքերը հազիվ են նշմարվում: Երկրորդը վերջինիս հարավից կից զանգակատունն է, որը, ըստ ամենայնի, եղել է կրկնահարկ: Երրորդը եկեղեցու և զանգակատան արևմտյան ճակատներից բացված մուտքերն իր մեջ ամփոփող զավիթն է, որից պահպանված որմերը հազիվ մեկ մետր բարձրություն ունեն:

Ջիլիզացիները վկայում են, որ հուշարձանախմբի մեծ մասը պայթեցումներով ոչնչացվել է 1930-ական թվականներին, որի արդյունքում ներկայումս ողջ հուշարձանախմբից փաստացի պահպանվել է միայն զանգակա-

purely Armenian-inhabited villages all of which were devastated and reduced to ruins in the aftermath of Lezghin raids (these mountaineers had been incited by the Ottoman invasions). Around a century and a half later, a small number of Armenian families took up living in two of these sites, present-day Jiliza and Chanakhchi, thus reviving the ancient villages.

Chronologically speaking, the monuments of material culture preserved in Jiliza and its neighbourhood may be classified in two groups: the first of them comprises monuments tracing back to the period between the 10th and 13th centuries (Chakhalaberd-Bazaberd, Khorakert, Khendzorex and the church of a village site called Church of David Bek²) and the second represents a cluster of smaller monuments which are larger in number (village sites, churches, cemeteries, etc.) and date from the Late Middle Ages.

THE MONUMENTS OF JILIZA PROPER

This cluster of monuments is situated at the eastern extremity of the village, at an altitude of 1,111 metres above sea level (N 41°13'39.84"; E 044°37'48.96").

It used to comprise three adjoining buildings, the first of which was a uni-nave vaulted church,³ the second a belfry abutting on it in the south and the third a narthex the surviving walls of which hardly have a height of a metre. The western entrances of both the church and bell tower open into this narthex. The latter probably had two floors. As for the former, its vestiges can hardly be discerned.

The inhabitants of Jiliza attest that most of these monuments were exploded in the 1930s, in the aftermath of which, only the first storey of the belfry is preserved from the entire cluster. Most presumably, its destroyed second




Գյուղամիջյան հուշարձանախմբի զանգակատան տեսքը հարավ-արևելքից և հարավից
The belfry within the monument cluster of Jiliza from the south-east and south

² Ջարգացած միջնադարին վերաբերող Խնձորեքսի վանքը (1213 թ.) և Դավիթ բեկի ժամը գտնվում են Բանուշ գետի հովտում: Պայմանավորված աշխարհագրական սահմանազատմամբ՝ այս, ինչպես նաև նույն ձորահովտում գտնվող ուշմիջնադարյան մի քանի հուշարձաններ նպատակադրվել ենք ներկայացնել մեկ այլ՝ առանձին հրատարակությամբ:

³ Տեղացիները եկեղեցու ճիշտ անունը չեն հիշում և նշում են երկու անուն՝ Սբ. Աստվածածին կամ Սբ. Սարգիս:

² The monastery of Khendzorex, which traces back to the High Middle Ages (1213) and the Church of David Bek are situated in the valley of the river Banush. Due to their geographical position, these monuments as well as several others located in the same valley and dating back to the Late Middle Ages will be presented in another publication.

³ The local people do not remember the right name of the church and call it either Sourb Astvatzatzin (Holy Virgin) or St. Sargis.




Գյուղամիջյան հուշարձանախմբի զանգակատան մնացորդները հյուսիս-արևմուտքից, ներքուստ և հատակագիծը
The remnants of the belfry within the monument cluster of Jiliza from the north-west and inwardly; the plan of the bell tower

տան առաջին հարկը: Կործանված երկրորդ հարկը, ըստ ամենայնի, ունեցել է ութ սյուների վրա կանգնած սրածայր վեղարով ավարտվող ռոտոնդա⁴:

⁴ Ի դեպ, Ջիլիզայի՝ խնդրո առարկա հուշարձանախմբին հար և մնան է Բոլնիս-Խաչենի գերեզմանոցում պահպանված հուշարձանախմբը: Ինչ վերաբերում է սուկ զանգակատանը, ապա վերջինիս զուգահեռներն առկա են հատկապես Գուգարքի և Արցախի մի շարք հնավայրերում (օրինակ՝ Ներքին Հռոմայրի, Արդվի, Դովեղի Սբ. Սարգիս վանքերի զանգակատները, Սամձերիսի Կույբուլաղ և Ուզունքիլիսա հնավայրերի զանգակատուն-եկեղեցիները Գուգարքում և Բանանցի, Մեծ Դարամուրատի և Չարեքա անապատների զանգակատներն Արցախում):

floor had a rotunda resting on eight pillars and ending with a pointed spire.⁴

⁴ The cemetery of Bolnis-Khachen, Bolnis District, Georgia, retains a cluster of monuments which exactly resembles the one in Jiliza. As for the belfry itself, its parallels can particularly be seen in a number of sites in Gugark (Lower Horomayr, Ardvi, St. Sargis of Dovegh as well as the belfry-churches in the sites of Kuybulagh and Uzunkilisa in Samtzevris) and Artsakh (the belfries of the cloisters of Banants, Metz Gharamurat and Charek).




Զանգակատան առաջին հարկի ներքին տեսքը դեպի հարավ և հյուսիս
An inner view of the first floor of the belfry to the south and north

Հուշարձանախմբի շուրջ տարածվել է ուշ միջնադարին վերաբերող գերեզմանոցը, որից պահպանվել են միայն մի քանի սալատապաններ:

Տապանաքարի բեկոր. գեղաքանդակ, զանգակատան ներսում, կողին և վերին մասում պահպանվել է հետևյալը.
Ի քվ(ին) Ռ/ՇԺԴ (1665), / այս է հանգիստ Ըռամազին, որ ...:
Հրատ. առաջին անգամ:

This monument cluster used to be surrounded with a late medieval graveyard the only remnants of which are several blocks of memorial stone.


An ornate tombstone fragment preserved inside the belfry retains the following inscription on one of its sides and on its upper part:
Transl.: *In the year 1114 (1665). In this grave reposes Ramaz...*
Published for the first time.



Տապանաքար, 1665 թ.
A tombstone of 1665

Տապանաքարի բեկոր. գեղաքանդակ, զանգակատան ներսում, երեսին պահպանվել է հետևյալը.
... / ...սա էլաւ գնաց Գեղամայ / երկիրն, ի դուռն շահ Ապազին և ճան/ապարհին անմեղ նահատակ(եա)լ էին ձգել/ին ծովն. լուս իջեալ յայտնի էլաւ, գտաք, բերեալ եղաք ի տապանիս:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Գեղամա երկրում Շահ Աբասը մեկիք Շահնազարի տանը հյուրընկալվել է 1607 թ., ուստի այն անձը, որի հիշատակին կերտվել է սույն տապանաքարը, սպանվել է նշյալ քվականին:

Inside the bell tower, the fragment of another richly-adorned gravestone bears the remnants of an inscription on its face:
Transl.: *...this person went to meet Shah Abbas in the Geghama land [the basin of Lake Sevan] but suffered martyrdom on his way and was thrown into the sea. A vision made it known, we found him and placed him in this grave.*
Published for the first time.
Note: Shah Abbas enjoyed the hospitality of Melik Shahnazar in the Geghama land in 1607; therefore, the person buried under this gravestone was killed in the same year.



Տապանաքար, 1607 թ.
A tombstone of 1607

Ջիլիզայի հարավային կողմում՝ ձորակի աջակողմյան՝ գյուղի դեմ հանդիման հյուսիսահայաց լանջի թեքության վրա, տարածված են գյուղի՝ միմյանց կից հին և նոր գերեզմանոցները: Ավելի բարձր մասում գտնվող խիտ թաղումներով հին գերեզմանոցում պահպանվել են ավելի քան երկու հարյուր անմշակ սալատապաններ, որոնց թվում՝ նաև ձեռքերը կրծքին խաչած հանգուցյալի ուրվաքանդակներով ուղղանկյունաձև մշակված մի քանի տապանաքարեր:

Հարկ է նշել, որ 2-3 տասնամյակ առաջ այս հնավայրում եղել են նաև երկու արձանագիր տապանաքարեր, որոնք գտնել, ցավոք, մեզ չհաջողվեց: Ահա այդ տապանագրերը.

Տապանաքար. եռատված, 8 տող.

*Այս է տա/պան պա/րոն Խոս/րովին, / որ փո-
խե/ցաւ առ / ա(ստուա)ծ, թվ(ի)ն / Ռ-ՃԺ (1661):*
Հրատ. Դիվան հայ վիմագրության, հ. 9, Երևան, 2012, էջ 271:

Տապանաքար. կարմրավուն քարից, 3 տող.

*Այս է հանգիստ / որդէի Չաքարի / կին Փա-
րինանին:*

Հրատ. Դիվան հայ վիմագրության, հ. 9, էջ 271:

Ծանոթ. կարծում ենք, ավելի ճիշտ կլիներ վերծանել
«Այս է հանգիստ որդի Էլիզբարի կին Փարինանին»:

Ինչևէ, այս գերեզմանոցն ակներևաբար փաստում է, որ ներկայիս Ջիլիզա գյուղը ԺԶ-ԺԷ դարերում և մինչև ԺԸ դարի 20-ական թթ. բավական մարդաշատ է եղել, ընդ որում, գյուղատեղիի վերածված մերձակա բոլոր գյուղերի նման՝ զուտ հայաբնակ (առաքելադավան):

The old and new graveyards of Jiliza extend side by side on the curve of a north-facing slope rising on the right side of a gorge right opposite the village, in its southern part. The former, which lies higher than the latter, preserves more than two hundred densely-laid undressed slabs of memorial stone, including several rectangular tombstones with outlined reliefs of the deceased with their arms crossed on their chests. Some 2 to 3 decades ago, this cemetery also retained two inscribed gravestones which we unfortunately failed to find *in situ* during our visit in March 2013. Below follow their epitaphs:

Eight lines engraved on a tombstone broken into 3 fragments:

Transl.: *In this grave reposes Mr. Khosrov, who consigned his soul to God in the year 1110 (1661).*

Published in: Դիվան հայ վիմագրության, հ. 9, Երևան, 2012, էջ 271.

Three lines carved on a reddish tombstone:

Transl.: *In this grave reposes ...Zakar's wife Parinan.*

Published in: Դիվան հայ վիմագրության, հ. 9, էջ 271.

Note: The following decipherment of this inscription seems more acceptable to us: «Այս է հանգիստ որդի Էլիզբարի կին Փարինանին» (transl.: “*In this grave reposes Parinan, the wife of son Elizbar*”).

This cemetery proves that from the 16th to 17th centuries and up until the ‘20s of the 18th century, Jiliza represented quite a populous village being purely inhabited by Apostolic Armenians like the other adjacent places.



Ջիլիզա գյուղի հարավային կողմում տարածված գերեզմանոցը և պատկերաքանդակ տապանաքարեր
The cemetery lying in the south of Jiliza and tombstones with reliefs

ԲԱԶԱԲԵՐԴ կամ ՉԱԽԱԼԱԲԵՐԴ

Բավական լավ պահպանված միջնադարյան բերդը գտնվում է Ջիլիզայից ուղիղ գծով 1,8 կմ հյուսիս-արևելք՝ երկու ձորակների միջև հյուսիս-հարավ ուղղությամբ հրվանդանաձև երկարած լեռնաճյուղի բարձրադիր գագաթին (ծ. մ. 1043 մ, N 41°13'39.76"; E 044°39'00.82"):

Ջիլիզացիներին Չախալաբերդ անվամբ հայտնի միջնադարյան ամրակուռ բերդն ընդհանրապես նույնացվում է Թ դարի անցքերի առնչությամբ հայ մատենագրությունից հայտնի Բազաբերդի հետ⁵:

⁵ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 131: Նաև՝ **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տիփսիս, 1842, էջ 88: **Յովհաննեսեան Մ.**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 583:

BAZABERD or CHAKHALABERD

This medieval castle, which is preserved in quite a good condition, rises at the lofty summit of a mountain branch extending like a cape between two gorges from the north southwards, 1.8 km north-east of Jiliza in a straight line, at an altitude of 1,043 metres above sea level (N 41°13'39.76"; E 044°39'00.82").

The solid fortification, known under the name of Chakhalaberd to the inhabitants of Jiliza, is generally identified with another stronghold, Bazaberd, mentioned in Armenian historiographical sources in connection with the events of the 9th century.⁵

⁵ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 131: Also see **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տիփսիս, 1842, էջ 88, **Յովհաննեսեան Մ.**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 583.



Հատվածներ Բազաբերդ կամ Չախալաբերդ ամրոցից
Partial views of the castle of Bazaberd (Chakhalaberd)




Հատվածներ Բազաբերդ կամ Չախալաբերդ ամրոցից
Partial views of the castle of Bazaberd (Chakhalaberd)



Հատվածներ Բազաբերդ կամ Չախալաբերդ ամրոցից
Partial views of the castle of Bazaberd (Chakhalaberd)

Բերդի հարթ մակերևույթը շրջապատից մեկուսացված է մինչև 12 մ բարձրությամբ բրգաշար պարսպապատով: Պահպանվածությամբ հատկապես աչքի է ընկնում ներսում բոլորակ հատակագծով սենյակներ ունեցող կիսաբոլորակ երկու աշտարակներով հզորացված արևմտյան պարիսպը: Բերդի մուտքը բացված է եղել հարավից: Արևելյան պարսպին կից ներքուստ առկա են քառանկյուն հատակագծով մի քանի սենյակների մնացորդներ: Պարիսպների շարվածքն իրականացված է տեղական անմշակ քարով և կրաշաղախով:



Բազաբերդ կամ Չախալաբերդ ամրոցի սխեմատիկ հատակագիծը (չափ.՝ Գ. Շախկյանի)
A schematic plan of the castle of Bazaberd or Chakhalaberd (measurement by G. Shakhkian)

The smooth grounds of the castle are separated from the neighbourhood by ramparts with towers which are laid with the local undressed stone and mortar, their height reaching 12 metres. The western wall is strengthened by two semi-circular towers having rooms of a circular plan. The entrance to the castle opened from the south. Inwardly, its eastern wall used to be adjoined by several rooms of a quadrangular plan, only the remnants of which are preserved at present.



ԱՂԵԳԻ

Երկու թաղամասերից բաղկացած այս անվամբ հայտնի գյուղատեղին գտնվում է Ջիլիզայից ուղիղ գծով 3,5 կմ հյուսիս-արևելք՝ հյուսիսահայաց անտառածածկ լեռնալանջի ստորոտին: Միմյանցից շուրջ 0,4 կմ հեռավորության վրա գտնվող թաղամասերից յուրաքանչյուրն ունի իր առանձին եկեղեցին և գերեզմանոցը: Թե՛ տնատեղերի քանակով (շուրջ 30) և թե՛ գերեզմանոցի ընդարձակությամբ և կանգուն եկեղեցով առանձնանում է գյուղատեղիի մեծ կամ արևելյան թաղամասը (ծովի մակերևույթից ունի 970 մ միջին բարձրություն):

Գյուղատեղիի տարածքում նկատելի են հազիվ մշարվող շուրջ 30 տնատեղերի հետ-

AGHEGI

This name is used with reference to a village site situated at the base of a wooded north-facing mountain slope, 3.5 km north-east of Jiliza in a straight line. It consists of two quarters located within about 0.4 km of one another, each of them having its own church and cemetery. Especially noteworthy is the large or eastern quarter of the village site, which lies at an average altitude of 970 metres above sea level: as compared to the other one, it retains a greater number of house sites (about 30), has a larger cemetery and a standing church.



Աղեգի գյուղատեղիի մեծ թաղի եկեղեցու տեսքը հարավից, արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք և թաղական ծածկը
The church of the large quarter of Aghegi from the south and west; its inner view to the east and its vaulted roof

քեր՝ լցված հողով ու պատված փարթամ բուսականությամբ:

Եկեղեցին (ծ. մ. 987 մ, N 41°14'00.18"; E 045°01'15.90") միանավ թաղածածկ հորինվածքով պարզ շինություն է՝ կառուցված անմշակ տեղական քարով, կրաշաղախով (արտաքին չափերն են՝ 8,0 x 4,8 մ, որմերի հաստությունը՝ 82 սմ): Երկթեք ծածկի տակ




The remnants of these dwelling sites, which can hardly be discerned, are filled with earth and covered with rich vegetation.

The church of the large quarter, which stands at 987 metres above sea level (N 41°14'00.18"; E 045°01'15.90"), represents a simple uni-nave vaulted building erected of the local undressed stone and mortar (exterior dimensions: 8.0 x 4.8

առնված կիսաշրջանաձև թաղը կրող սրբատաշ թաղակիր կամարը ներքուստ հենված է մեկ զույգ ամբարձակավոր հենարանին: Լուսավորությունն իրականացված է արևելյան և արևմտյան ճակատներից բացված դեպի ներս լայնացող մեկական լուսամուտով, որոնցից արևմտյանն արտաքուստ ունի բաց գույնի միակտոր քարից կերտված պարզ շրջանակ: Խորանում առկա են զույգ խորհրդարաններ: Ունեցել է երկու մուտք՝ բացված հարավային և արևմտյան ճակատներից, բայց, ինչպես երևում է, այս վերջինը փակվել է շինարարության ավարտից անմիջապես հետո:

metres; wall thickness: 82 cm). Its semi-circular vault, which lies beneath a gable roof, inwardly rests on a finely-finished built-in-wall arch supported by a pair of pilasters. The monument is illuminated through a window widening inwardly opening from each of the eastern and western facades. Outwardly, the western window has a simple frame of a light colour made of a single piece of stone. The sanctuary has two recesses. The church used to have two entrances opening from its southern and western facades (apparently, the latter closed immediately after the completion of its construction).



0 1 2 3 4 5 m



Աղեգի գյուղատեղիի մեծ թաղի եկեղեցու տեսքն արևելքից, գերեզմանոցը և պատկերաքանդակ տապանաքարերը
The church of the large quarter of Aghegi from the east; its graveyard and tombstones with reliefs



Խիտ քաղումներով գերեզմանոցը տարածված է եկեղեցուց շուրջ 100 մ հյուսիս՝ բլրաճյուղի փոքրիկ բարձրության վրա (ծ. մ. 960 մ, N 41°14'02.94"; E 045°01'11.82"), և պարունակում է շուրջ 60 անմշակ սալատապաններ, ուղղանկյունաձև մշակված մի քանի տապանաքարեր, որոնց թվում կան մասնապատկերաքանդակվածներ: Վերջիններից առանձնանում է մեկը, որի վրա, ձեռքերը կրծքին խաչած մարդու ուրվաքանդակից զատ, առկա են մասնաձևեր, կժի, դանակի, սազի քանդակներ:

Հնավայրում կան մասնապատկերաքանդակված 5-6 խաչքարեր և խաչքարաքեկորներ: Պահպանված արձանագրությունները երկու խաչքարերի վրա են:

Խաչքար. գեղաքանդակ, կանգնած պատվանդանին, չափերը՝ 74 x 42 x 17 սմ, վերնամասում և խաչքարերի միջև՝ 4 տող.

Ս(ուր)բ խ(ա)չս Առ(ա)քելին, | ի թվ(ին) Ռ-ՃԺԲ (1663):

Հրատ. առաջին անգամ:

The cemetery of this quarter extends on the small elevation of a hill branch of an insignificant height, around 100 metres north of the church, at 960 metres above sea level (N 41°14'02.94"; E 045°01'11.82"). It retains over 60 densely-laid undressed slabs of memorial stone and several rectangular tombstones some of which are adorned with reliefs. One of them bears the outlined relief of a human being with his arms crossed on his chest as well as reliefs of a horseman, jug, knife and a *saz* (an Oriental musical instrument).

The graveyard also retains some cross-stone fragments and 5 to 6 displaced khachkars which have been stripped of their pedestals. Two of these cross-stones are engraved with inscriptions.

Four lines engraved on the upper part and between the cross wings of an ornate cross-stone (dimensions: 74 x 42 x 17 cm) standing on a base:

Transl.: *This Holy Cross to Arakel. In the year 1112 (1663).*

Published for the first time.



Խաչքար (1663 թ.) Աղեգի գյուղատեղիի մեծ թաղի գերեզմանոցում
A cross-stone (1663) in the cemetery of the large quarter of Aghegi



Խաչքարեր և տապանաքարի քեկոր (ԺԷ-ԺԸ դդ.) Աղեգի գյուղատեղիի մեծ թաղի գերեզմանոցում
Cross-stones and a tombstone fragment (17th to 18th centuries) in the cemetery of the large quarter of Aghegi



Խաչքար. գեղաքանդակ, տեղահան, չափերը՝ 148 x 64 սմ, քիվաճակատին՝ մեծ մասամբ եղծված 2 տող.

...ակ... / ...նիկին...:


Հրատ. առաջին անգամ:

Աղեգի գյուղատեղիի փոքր կամ վերին թաղը գտնվում է նախորդից մոտ 0,4 կմ հարավ-արևմուտք՝ շուրջ 120 մ բարձրության վրա: Այստեղ նկատելի են նույն վիճակում գտնվող մոտ 20 տնատեղեր:

Այս թաղը ևս ունեցել է իր առանձին եկեղեցին (N 41°13'57.66"; E 044°39'57.60"), որը գրե-



Աղեգի գյուղատեղիի փոքր թաղի եկեղեցու տեսքը հարավից
The church of the small quarter of Aghegi from the south




Two lines, which are mostly distorted, carved on the cornice front of a richly-adorned displaced cross-stone (dimensions: 148 x 64 cm):

Published for the first time.

Note: The inscription is too incomplete to be translated.

The small or upper quarter of Aghegi extends about 0.4 km south-west of the large one, over 120 metres higher. It retains the sites of about 20 houses just in the same condition as those in the other quarter.



0 1 2 3 m



Աղեգի գյուղատեղիի փոքր թաղի եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից, հարավ-արևմուտքից, արևմուտքից և խորանը

The church of the small quarter of Aghegi from the north-east, south-west and west; its sanctuary

թե կրկնում է գյուղատեղիի մեծ թաղում գտնվող եկեղեցու հորինվածքը (միակ տարբերությունն այն է, որ այստեղ մուտքը բացված է միայն արևմտյան ճակատից), սակայն ունի ավելի փոքր չափեր (6,35 x 4,45 մ, որմի հաստությունը՝ 72 սմ):

Խիտ թաղումներով գերեզմանոցը տարածվում է եկեղեցու ավերակից փոքր-ինչ հարավ-արևմուտք՝ ավելի բարձր դիրքում (ծ. մ. 1012 մ, N 41°13'57.12"; E 044°39'56.46"): Տեղում պահպանվել են շուրջ 30 անմշակ սալատապաններ և ԺԶ-ԺԷ դարերին բնորոշ ոճական և գեղարվեստական հարդարանքով տեղահան մի քանի խաչքարեր: Դրանցից մեկի վրա նշմարվում է թվակիր արձանագրության մնացորդ:

As already stated above, this quarter has its own church (N 41°13'57.66"; E 044°39'57.60"), which almost shares the composition of that in the large quarter, although its dimensions are smaller (6.35 x 4.45 metres; wall thickness: 72 cm) and it has only one entrance opening from its western facade.

The graveyard of this quarter lies slightly south-west of, and higher than, the church ruins, at 1,012 metres above sea level (N 41°13'57.12"; E 044°39'56.46"). It preserves about 30 densely-laid undressed stone slabs and several displaced cross-stones the stylistic and artistic ornamentation of which are typical of the 16th to 17th centuries. One of the latter bears the hardly discernible remnants of a dated epitaph.



Գերեզմանոց (ԺԶ-ԺԷ դդ.) Աղեզի գյուղատեղիի փոքր թաղի եկեղեցու հարավարևմտյան կողմում
A cemetery (16th to 18th centuries) lying south-west of the church of the small quarter of Aghegi

Խաչքար. գեղաքանդակ, տեղահան, ստորին կես մասը՝ փշրված, չափերը՝ 51 x 42 սմ, հիմնախաչի ստորին թևի երկու կողմերում պահպանվել է արձանագրության միայն երկտող սկզբնամասը.


Ս(ուր)ք խ(ա)չս բա/(րե)խ(ա)ս, քվ(ին)....:
Հրատ. առաջին անգամ:



Խաչքար (ԺԶ-ԺԷ դդ.) Աղեգի գյուղատեղիի փոքր թաղի գերեզմանոցում
A cross-stone (16th to 17th centuries) in the cemetery of the small quarter of Aghegi

Only the initial two lines of an inscription are preserved on both sides of the lower wing of the main cross of an ornate displaced cross-stone (dimensions: 51 x 42 cm) the lower half of which is crumbled:

Transl.: *May the Holy Cross be merciful. In the year...*
Published for the first time.



ԿԱՐՄՐԱԳԵՂՑԻ


Ջիլիգայից ուղիղ գծով 1,8 կմ հարավ-արևելք՝ դեպի Չախալաբերդ ձգվող ձորակի ձախակողմի անտառածածկ արևմտահայաց լեռնալանջի փոքրիկ բարձրության վրա (ծ. մ. 1305 մ, N 41°12'40.02"; E 045°38'03.60"), կիսավեր դրությամբ դեռևս պահպանվում է բուն անունը մոռացության մատնված միանավ թաղածածկ հորինվածքով մի եկեղեցի, որը մերձաբնակ գյուղացիներին հայտնի է Կարմրագեղցի անվամբ:



Կարմրագեղցի գյուղատեղիի եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից
The church of the village site of Karmrageghtsi from the north-east

KARMRAGEGHTSI

A uni-nave vaulted church is preserved in a semi-ruined state on a wooded west-facing mountain slope rising on the left side of a gorge which extends in the direction of Chakhalaberd, 1.8 km south-east of Jiliza in a straight line, at an altitude of 1,305 metres above sea level (N 41°12'40.02"; E 045°38'03.60"). Its historical name has fallen into oblivion and the villagers of the neighbourhood call it Karmrageghtsi.



Խաչքարեր (ԺԶ-ԺԷ դդ.) Աղեգի փոքր թաղի գերեզմանոցում
Cross-stones (16th to 17th centuries) in the cemetery of the small quarter of Aghegi



Կարմրագեղցի գյուղատեղիի եկեղեցու տեսքն արևելքից, արևմուտքից և արևելյան ճակատից բացված լուսամտի գլխակալ քարը
The church of the village site of Karmrageghtsi from the east and west and the stone above the window opening from its eastern facade

Ամնշակ քարով և կրաշաղախով իրականացված շինությունը ներքուստ պատված է եղել սվաղի շերտով, իսկ թաղը՝ հենված մեկ զույգ որմնասյուների: Կիսաբոլորակ խորանի մեջ պահպանվել են զույգ խորհրդարանները, իսկ հյուսիսային որմունք՝ մկրտության ավազանի համար նախատեսված խորշը: Որմներն ունեն 90 սմ հաստություն: Եկեղեցու չափերն են՝ 8,26 x 5,22 մ:

Եկեղեցու ծածկը, արևմտյան որմն ամբողջությամբ և նրան հարող հյուսիսային և հատկապես հարավային որմերն արդեն քանդված են⁶:

Եկեղեցուց հյուսիս՝ ձորի հանդիպակաց կողմում՝ խիտ անտառի և մացառների մեջ, պահպանվում է միայն մի քանի անմշակ սալատապաններ պարունակող գերեզմանոցը:

The monument (wall thickness: 90 cm; dimensions: 8.26 x 5.22 metres), which is built of undressed stone and mortar, used to be inwardly covered with plaster, its vault resting on a pair of pilasters. Its semi-circular sanctuary preserves two recesses, and the niche for the font can be seen in its usual place, namely in the northern wall.

The church roof has already collapsed together with its western, northern and southern walls, the western one being thoroughly in ruins.⁶

A cemetery preserving only several undressed slabs of memorial stone lies in a thick forest north of the church, on the opposite side of the gorge.



⁶ Ըստ մեր առաջնորդ ջիլիզացի Անուշավան Հալիվորյանի վկայության՝ եկեղեցին մինչև 1990-ական թթ. վերջերը մեծ մասամբ կանգուն է եղել, որի ներսում մարդիկ պատսպարվում էին անձրևների ժամանակ:

⁶ According to Anushavan Halivorian, an inhabitant of Jiliza who was our guide during our recent trip to Karmrageghtsi, the church was mostly preserved standing until the late 1990s providing people with shelter when it rained.



Վերին Վելադ գյուղատեղիի եկեղեցու տեսքն արևմուտքից
The church of Upper Velad from the west




Վերին Վելադ գյուղատեղիի եկեղեցու տեսքը հարավից և հյուսիս-արևմուտքից
The church of Upper Velad from the south and north-west

ՎԵՐԻՆ ՎԵԼԱԴ

Այս անվամբ հայտնի գյուղատեղին գտնվում է Ջիլիզայից ուղիղ գծով 2,3 կմ արևելք՝ անտառածածկ բլրագագաթին և հյուսիս-սահայաց լանջերին: Ծովի մակերևույթից բարձր է 1040-1087 մ:

Շուրջ 30 տնատեղեր պարունակող գյուղատեղիում պահպանվել են նաև ստորգետնյա հորեր:

Եկեղեցին գտնվում է գյուղատեղիի առավել բարձրադիր մասում՝ բլրագագաթին (ծ. մ. 1087 մ, N 41°13'42.66"; E 044°39'21.66"): Ունի



0 1 2 3 4 5 m

UPPER VELAD


This village site extends on the wooded top and north-facing slopes of a hill, 2.3 km east of Jiliza in a straight line, at an altitude of 1,040 to 1,087 metres above sea level.

It preserves the remnants of about 30 houses and some underground wells.

The church of Upper Velad stands in its most elevated part, namely at the summit of the hill, at 1,087 metres above sea level (N 41°13'42.66"; E 044°39'21.66"). It represents a uni-nave vaulted basilica with a sanctuary having the form of a



Վերին Վելադ գյուղատեղիի եկեղեցու տեսքն արևելքից
The church of Upper Velad from the east



Եկեղեցու խորանը և ծածկասալերի քեկորներ
The sanctuary of the church and fragments of its covering slabs

միանալ թաղածածկ բազիլիկ հորինվածք, փռված կիսաշրջանի ձևով խորան և երկու մուտք՝ բացված հարավային և արևմտյան ճակատներից (վերջինս հազիվ է նշմարվում այդ ճակատի փլուզված լինելու պատճառով): Երկթեք ծածկը պատված է եղել սպիտակ կրաքարից կերտված կանոնավոր մշակված սրբատաշ ծածկասալերով: Ունի 6,26 x 5,03 մ արտաքին չափեր և 84 սմ որմնի հաստություն:

Եկեղեցու արևմտյան կողմում՝ մի քանի մետր հեռավորության վրա, պահպանվում է ակնհայտորեն արևմտյան մուտքից վայր ընկած շինարարական արձանագրությամբ բարավորը (182 x 58 x 17 սմ): Արձանագրությունը երկլեզվյան է՝ հայերեն և վրացերեն.

Ես՝ Ենովքս, այս դուռս / շինեցի յիշատակ ինձ, / Բախտուին, ով տեսնու, / մի բերան ողորմի ասէ, / թվին / ՌՃԿ (1711), / ա(ստուա)ծ ողորմի / Ջալին՝ եկ/եղեցու շինողին:

ქ ე ს ე ს ა კ დ ა რ ი დ ა კ ა რ ი ა ვ (ა) შ ე მ ე ც ო დ ა ვ ი დ ი მ ე ნ ო ქ ა მ ა (?) / ძ ე მ ი ს ა ბ ა ხ ე ჳ ა ს დ ა ზ ე მ ი შ ე ხ ნ ო ბ რ ა დ ვ ი ნ ც წ ა ო ო თ ხ ო თ შ ე ნ დ ო ბ ა ბ დ ა ნ ე თ .


stretched semi-circle and two entrances opening from its southern and western facades (the latter has collapsed so that this entrance can hardly be discerned). The gable roof of the monument (exterior dimensions: 6.26 x 5.03 metres; wall thickness: 84 cm) used to have finely-finished regular covering slabs of white limestone.

The bilingual (in Armenian & Georgian) construction inscription of the church was engraved on the tympanum (182 x 58 x 17 cm) of its western entrance, which has fallen off and lies west of the monument, within several metres of it.

Transl. from Armenian: *I, Yenovk, had this door built in memory of my soul and Bakhut. May those who see it pray for us. In the year 1160 (1711). May God have mercy upon Zal, the builder of this church.*

Transl. from Georgian: *Christ, I, sinner Yenovk, built this church and door in memory of my brother Bakhut and my soul. May those who read it pray for us.*

Published for the first time.



Վերին Վելադ գյուղատեղիի եկեղեցու բարավորի շինարարական երկլեզվյան արձանագրությունը, 1711 թ.
The tympanum of the church of Upper Velad with a bilingual construction inscription (1711)

Թարգմ. *Քրիստոս, այս տաճարը և դուռը կառուցեցի ես՝ մեղավոր Ենովքս, իմ եղբոր՝ Բախտուհին և ինձ հիշատակ, ովքեր կարդան, ողորմի ասեմ:*

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ինչպես երևում է, եկեղեցու կառուցումը գլխավորել է Ենովքը, քերես մասնակցել է նաև Բախտուր, իսկ շինարար-վարպետը (ուստան) եղել է Զալը:

Եկեղեցու երեսապատի վայր ընկած քարերից մեկին՝ խաչաքանդակ, որին կից՝ 3 տող (չափերը՝ 70 x 30 x 7 սմ).

Ս(ուր)բ խաչս / քարէխաւս է ճարումին:

Հրատ. Դիվան հայ վիմագրության, հ. 9, էջ 272:
Ծանոթ. ժամանակը՝ ԺԸ դար: Ի դեպ, հրատարակիչները սխալվել են վիմագրի երրորդ տողում և «ճարում» անձնանունը վերծանել «ճ Արուտին», որն էլ բացատրել՝ «ճարտարապետ Հարություն»: Հարկ է նշել, սակայն, որ վիմագրական ցարդ հայտնի հուշարձաններում ճարտարապետ բառը երբևէ այդ կերպ չի տպագրվել, և, բացի այդ,



պետք է նկատի ունենալ, որ ուշ միջնադարում գործածական էին ոչ թե ճարտարապետ, այլ հատկապես «ուստա» կամ «քարահատ» ձևերը:

Գյուղատեղիի գերեզմանոցը զբաղեցնում է եկեղեցու շրջափակը և հատկապես կառույցից հարավ տարածված հարթությունը: Այստեղ պահպանվել են ավելի քան երկու տասնյակ գերեզմանաքարեր և խաչքար: Ուղղանկյուն-




Վերին Վելադ գյուղատեղիի գերեզմանոցը եկեղեցու հարավային կողմում
The graveyard of Upper Velad lying south of the church

Note: Apparently, Yenovk supervised the construction of the church, in which Bakhut probably took some participation. As for Zal, he was its master builder.

One of the fallen revetment stones of the church is adorned with a cross relief near which an inscription of 3 lines is found (dimensions: 70 x 30 x 7 cm):

Transl.: *May the Holy Cross protect Jarum.*

Published in: Դիվան հայ վիմագրության, հ. 9, էջ 272.
Note: The inscription traces back to the 18th century. It should be noted that the publishers made a mistake in its third line deciphering the personal name of “Jarum”/«ճարում» as «ճ Արուտին», which they read as “architect Harutian” /«ճարտարապետ Հարություն». However, the Armenian word «ճարտարապետ» (the equivalent of ‘architect’) is not ever abbreviated like that in the existing lapidary heritage; besides, in the Late Middle Ages, the Armenian words



«ուստա» (‘master’) or «քարահատ» (‘mason’) were used instead of «ճարտարապետ».

The cemetery of Upper Velad occupies the area close to the church particularly extending in the smooth terrain south of it. It retains a cross-stone and more than twenty tombstones, including rectangular ones most of which are



Պատկերաքանդակներով տապանաքար Վերին Վելադում
A tombstone with reliefs in Upper Velad

նաճև մշակված տապանաքարերի մեծ մասն ունի գեղազարդ հարդարանք, մի քանիսը՝ նաև կենցաղային թեմաներով պատկերաքանդակներ: Գերեզմանական թվակիր հուշարձանները վերաբերում են 1628, 1679 (2 միավոր), 1681, 1689, 1690, 1705, 1707 թթ.: Տեղում առկա են նաև ԺԷ-ԺԸ դարերին վերաբերող մի քանի անթվակիր տապանաքարեր, որոնք բոլորը միասին՝ ընդամենը 12 միավոր, ներկայացնում ենք ստորև.

Խաչքար. գեղաքանդակ, տեղահան, չափերը՝ 88 x 50 x 18 սմ, քիվին, քիվատակի կորուսյալ վրա և հիմնախաչի ստորին մասում՝ 5 տող.

Սուրբ խաչս բարեխաւս է Առաքելին, անմեղ սպանեցին հողի ջրի վրայ: Վել(ա)թ Սարգ(ս)ին որդի, / թվ(ա)կ(ան) Ռ-ՀԷ (1628):
Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար. տեղահան, չափերը՝ 140 x 54 x 25 սմ, վերնամասում պարզ խաչաքանդակի վրա՝ 3 տող.


Այս է տապան / պ(ա)րոն Լէլին, / թվին ԱճԻԸ (1679):
Հրատ. առաջին անգամ:

distinguished for their rich ornamentation (some of them are also enriched with reliefs of everyday scenes). The dated funerary memorials trace back to 1628, 1679 (2 pieces), 1681, 1689, 1690, 1705 and 1707. There are also some undated gravestones of the 17th and 18th centuries, 12 in total number, the epitaphs of which follow below:

Five lines engraved on the cornice, the curve beneath it and lower than the main cross of a displaced ornate cross-stone (dimensions: 88 x 50 x 18 cm):

Transl.: *May the Holy Cross protect Arakel, who was killed as an innocent victim during a quarrel over some land and water. Velat Sargis' son, 1077 (1628).*

Published for the first time.



Three lines carved on a simple cross relief on the upper part of a displaced tombstone (dimensions: 140 x 54 x 25 cm):

Transl.: *In this grave reposes Mr. Leli. In the year 1128 (1679).*
Published for the first time.



Տապանաքար. տեղահան, չափերը՝ 143 x 28 սմ, վերնամասում՝ պարզ խաչաքանդակի վրա, 2 տող.

Այս է տապան Դամբիին՝ որդի Խա[րա]ին, / Թվ(ին) ՌՃԻԸ (1679):



Հրատ. Դիվան հայ վիմագրության, հ. 9, էջ 272:
Ծանոթ. հրատարակության մեջ («Դարբին»՝ որդի Արասին») առկա է անձնանունների աղճատում:

Տապանաքար. տեղահան, չափերը՝ 122 x 27 սմ, վերնամասում՝ 1 տող.

Այս է տապան Մանուչարին՝ որդի Չալին, Թվ(ին) ՌՃԼ (1681):

Հրատ. առաջին անգամ:



Տապանաքարի քեկոր. տեղահան, չափերը՝ 75 x 27 x 47 սմ, վերնամասում՝ 1 տող.

[Այս է տապան Փ]արսայդան(ին), Թվ(ին) ՌՃԼԸ (1689):


Հրատ. առաջին անգամ:



Տապանաքար. տեղահան, չափերը՝ 159 x 24 x 53 սմ, վերնամասում՝ 1 տող.

Այս է տապան պ(ա)րոն Մարելին՝ կողակից ուստայ Նէ(ր)սեսին, Թվ(ին) ՌՃԼԹ (1690):

Հրատ. առաջին անգամ:



Two lines on a simple cross relief on the upper part of a displaced tombstone (dimensions: 143 x 28 cm):

Transl.: *In this grave reposes Khara's son Dambi. In the year 1128 (1679).*



Published in: Դիվան հայ վիմագրության, հ. 9, էջ 272.
Note: In this decipherment («Դարբին»՝ որդի Արասին»), the personal names are distorted.

A single line engraved on the upper part of a displaced gravestone (dimensions: 122 x 27 cm):

Transl.: *In this grave reposes Zal's son Manuchar. In the year 1130 (1681).*

Published for the first time.



A single line on the upper part of a displaced gravestone fragment (dimensions: 75 x 27 x 47 cm):

Transl.: *In this grave repose the remains of Parsadan. In the year 1138 (1689).*

Published for the first time.



A single line on the upper part of a displaced gravestone (dimensions: 159 x 24 x 53 cm):

Transl.: *In this grave reposes Mr. Marel, master Nerses' wife. In the year 1139 (1690).*

Published for the first time.



Տապանաքարեր Վերին Վելադի գերեզմանոցում
Tombstones in the cemetery of Upper Velad

Տապանաքար. ստորին աջ մասից կտրված, չափերը՝ 159 x 48 սմ, վերնամասում՝ երկլեզվյան (վրացերեն և հայերեն) երկտող արձանագրություն.

ქ უფალო ღმერთო მოიხსენებ(?)
ო(ა)მად, քվ(ին) ო-ნდ/რ (1705):


Թարգմ. Քրիստոս տեր աստված, յիշեցեք (?)
Թամարին, քվ(ին) ሰ-նԾ/ր (1705):

Հրատ. առաջին անգամ:

A bilingual, Georgian & Armenian (only the year) epitaph of two lines carved on the upper part of a tombstone (dimensions: 159 x 48 cm) which is broken in its lower right part:

Transl.: *Lord Jesus. May you remember (?)
Tamar. In the year 1154 (1705).*

Published for the first time.




Տապանաքար. տեղահան, ստորին մասից կտրված, չափերը՝ 150 x 60 x 20 սմ, վերնամասում՝ 4 տող.

Այս է տապան / Բախուտին, ով / տեսնու, մի
ողորմի / ասէ, քվ(ին) ሰ-նԾԶ (1707):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. քերև այս Բախուտը եկեղեցու շինարարական արձանագրության մեջ հիշված միևնույն անձն է:




Four lines on the upper part of a displaced gravestone (dimensions: 150 x 60 x 20 cm) which is broken in its lower part:

Transl.: *In this grave reposes Bakhut. May those who see it pray for his soul. In the year 1156 (1707).*

Published for the first time.

Note: Probably, Bakhut is the same person mentioned in the construction inscription of the church.



Տապանաքար. ուղղանկյունաձև, չափերը՝ 155 x 54 սմ, վերնամասում՝ 5 տող.

Այս է տապան / Թամ/ազին, / քվին / ሰ-նԾ...
(1700-ական թթ.):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տապանագիրն առաջին անգամ ընթերցել ենք 1992 թ. սեպտեմբերին, երբ հնավայր էինք այցելել խոժոռնեցի Յուրա Հախվերդյանի առաջնորդությամբ, մինչդեռ մեր վերջին այցելության ժամանակ՝ 2013 թ. մարտին, այն վերագտնել չհաջողվեց:

Five lines on the upper part of a rectangular tombstone (dimensions: 155 x 54 cm):

Transl.: *In this grave reposes Tamaz. In the year 11... (1700s).*

Published for the first time.

Note: We first read this epitaph in September 1992, when we made a visit to this site having Yura Hakhverdian from Khozhorni as our guide. However, we failed to find it in situ when we again went there in March 2013.

Տապանաքար. տեղահան, չափերը՝ 115 x 38 x 17 սմ, 4 տող.



Այս է տապան / Ալայվերդու / դեղայ / Թի-
ն/այթինին:

Հրատ. առաջին անգամ:

Four lines on a displaced tombstone (dimensions: 115 x 38 x 17 cm):

Transl.: *In this grave reposes Alaverdi's mother Tinatin.*

Published for the first time.



Տապանաքար. տեղահան, ստորին մասից կտրված, չափերը՝ 56 x 44 սմ, վերնամասում՝ 4 տող.

Այս է տապան / Ջալի դեղայ / պարոն թի-
ն/ալթինին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ջալի մոր՝ տիկին Թինաթինի տապանագիրն է:




Four lines on the upper part of a displaced tombstone (dimensions: 56 x 44 cm) which is broken in its lower part:

Transl.: *In this grave reposes Zal's mother, Mr. Tinatin.*

Published for the first time.

Note: This is the epitaph of Zal's mother, Mrs. Tinatin.



Տապանաքար. տեղահան, չափերը՝ 151 x 24 x 53 սմ, վերնամասում՝ 1 տող.

Այս է տապան պ(արո)ն Ջալին, ով տեմու,
մի ողորմի ասէ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. քերես սա եկեղեցին կառուցող Ջալն է: Ժամա-
նակը՝ մինչև 1711 թ.:



A single line on the upper part of a displaced tombstone (dimensions: 151 x 24 x 53 cm):

Transl.: *In this grave Mr. Zal's remains rest in eter-
nal repose. May those who see it pray for his soul.*

Published for the first time.

Note: Probably, this is the builder of the church. The epi-
taph was engraved prior to 1711.

Այս է տապան պ(արո)ն Ջալին, ով տեմու,
մի ողորմի ասէ:

0 5 10 15 20 սմ

ԶԻԹԱՀԱՆԹԻ ԵԿԵՂԵՑԻ

Զիլիզայից ուղիղ գծով 2,2 կմ հարավ-արև-
մուտք՝ Զիթահանք անվամբ հայտնի հանդա-
մասում (ծ. մ. 1228 մ, N 41°12'54.00"; E
044°36'25.14"), պահպանվել են անմշակ քա-
րով կառուցված միանավ հորինվածքով գրեթե
հիմնավեր եկեղեցի և գերեզմանոց: Բուն անու-
նը մոռացության մատնված և փլվածքների ու
հողաշերտի մեջ թաղված եկեղեցուց նշմար-
վում են միայն կիսաբոլորակ խորանի մի հատ-
վածքը և, որ ուշագրավ է, նաև սեղանի վեմքարն
անխախտ վիճակում:

CHURCH OF DZITAHANK

Dzitahank is a plot of land lying 2.2 km south-
west of Jiliza in a straight line, at an altitude of
1,228 metres above sea level (N 41°12'54.00"; E
044°36'25.14"). It preserves a cemetery and a uni-
nave church of undressed stone which is almost
totally ruined, being buried under ruins and a
layer of earth. At present only part of its semi-cir-
cular sanctuary can be discerned with the altar
stone, which, surprising as it is, is preserved
intact.



0 1 2 3 4 5 մ

Եկեղեցու մնացորդներ Զիթահանք հանդամասում
Church remnants in a plot of land called Dzitahank

Փլատակի մեջ առկա է մաս թևավոր մի խաչ, որը թերևս այստեղ է փոխադրվել եկեղեցու հարավային կողմում տարածված գերեզմանոցից: Խիտ թաղումներով գերեզմանոցում ներկայումս պահպանվել են շուրջ մեկուկես տասնյակ անմշակ սալատապաններ:

ՏՈԼԱԲԱԲԻ ԽԱՉ ՍՐԲԱՏԵՂԻ

Զիլիզայից ուղիղ գծով 2 կմ հյուսիս-արևմուտք՝ «Հյունի տախտ» կամ «Երգեն հող» անուններով հայտնի հանդամասում է գտնվում մերձաբնակ գյուղերի բնակիչներին Տոլաբաբի խաչ անվամբ հայտնի սրբատեղին (ծ. մ. 1197 մ, N 41°14'14.58"; E 044°36'34.74"):

Այստեղ՝ հրվանդանաձև երկարած անտառածածկ լեռնաճյուղի թմբաձև առանձնացած փոքրիկ բարձրության վրա՝ շրջափակ քարակույտի ներսում, առկա են նորագույն ժամանակներին վերաբերող երկու խաչքարեր: Նրանցից փոքրի վրա կա տարեթիվ, իսկ մեծի վրա՝ երկտող արձանագրություն:

1990 թ.: // *Տոլաբաբ խաչին / Ռոման Գալուստի / Խանզադյանից:*

Ենթադրելի է, որ սրբացված այս վայրում նախկինում գոյություն է ունեցել ավելի հին մի խաչքար, որը, սակայն, չի պահպանվել:

The ruins of the church, the original name of which has fallen into oblivion, also retain a winged cross probably brought here from a cemetery extending south of the monument. It preserves over 15 densely-lying unfinished slabs of memorial stone.

CROSS OF TOLABAB

A plot of land, situated 2 km north-west of Jiliza in a straight line and known by the names of Hyuni Takht and Yergen Hogh, retains a sacred site called Cross of Tolabab by the inhabitants of the adjacent villages. It lies at an altitude of 1,197 metres above sea level (N 41°14'14.58"; E 044°36'34.74").

It comprises two modern khachkars surrounded with stones: they are placed on the small mound-like elevation of a wooded mountain branch, which has an extended form resembling a cape. The smaller of them bears a year and the larger one an inscription of two lines:

Transl.: 1990. *To the Cross of Tolabab from Roman Galust Khazadian.*

Most presumably, this sacred site used to retain an older cross-stone which has not reached our days.



Տոլաբաբի խաչ սրբատեղիի խաչքարը, 1990 թ.
The cross-stone (1990) in the sacred site named Cross of Tolabab



Խորակերտի վանքը և Լալվար լեռը հյուսիսից
Khorakert Monastery and Mount Lalvar from the north



Գրքի ստեղծմանն աջակցելու համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում թանկագին ջիլիզացիներ Արամայիս Հալիվորյանին և Միեր Վարդանյանին:

We are very grateful to our dear friends from Jiliza who supported us in the preparation of the book: Aramayis Halivorian and Mher Vardanian.v



Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) «SOS մշակույթ» ծրագիրը, որը կյանքի է կոչվել 2012 թ. (24 ամիս տևողությամբ) Եվրոմիության «Եվրոպական հարևանության քաղաքականության» (ԵՀՔ) շրջանակներում, նպատակ ունի համայնքային ուժերի ներգրավվածությամբ ճանաչելի դարձնելու և արժևորելու Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջաններում պահպանված պաշտամունքային և աշխարհիկ բնույթի պատմական հուշարձանները՝ կիսավեր և մոռացված բերդեր և ամրոցներ, վանքեր, եկեղեցիներ և մատուռներ, միջնադարյան բնակատեղիներ, քարանձավ-կացարաններ, գերեզմանոցներ և այլն, որոնցից շատերն անտեսված են և խնամքի, ուշադրության կարիք ունեն:

«Հատելով սահմանները՝ պահիր, պահպանիր, խնամիր» կարգախոսով «SOS մշակույթ» ծրագիրն իրականացվում է Արևելյան մշակութային գործընկերության ֆինանսավորմամբ, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (ՀՃՈՒՀ) և dvv international կազմակերպության Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի հետ համագործակցությամբ:

«SOS մշակույթ»-ը գտնում է, որ պատմական արժեքների պահպանումն ու ուսումնասիրությունը խթանում են հեռավոր շրջաններում զբոսաշրջության զարգացումը:

«SOS մշակույթ»-ը կարևորում է մշակութային արժեքների ուսումնասիրման աշխատանքներին և դրանց պահպանման միջոցառումներին Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում բնակվող բազմազգ երիտասարդության ներգրավումը:

Վստահ ենք, որ հայրենաճանաչությանն առնչվող գիտելիքների խորացումը կնպաստի ապագայի առավել հոգատար քաղաքացու ձևավորմանը:

The SOS Culture project of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) was triggered in 2012 for a 24-month period within the framework of the European Neighbourhood Policy (ENP) of the European Union. It pursues the aim of raising awareness of, and evaluating the wide variety of religious and secular monuments (semi-ruined and forgotten castles and fortresses, churches, chapels and monasteries, medieval sites, cave dwellings, cemeteries, etc.) preserved in the border regions of the Republics of Armenia and Georgia with the involvement of community members (this heritage is mostly consigned to neglect and needs proper attention).

“Crossing borders to save, preserve and care”: this is the slogan of the SOS Culture project, which is funded by the Eastern Partnership Culture Programme and has been implemented in collaboration with Research on Armenian Architecture (RAA) Foundation and the dvv international Georgia Country office.

Those involved in the project are convinced that the preservation and studies of historical assets promote the development of tourism in remote regions. They attach much importance to the involvement of the youth of different nationalities living in the border regions of Armenia and Georgia in the events aimed at research into, and preservation of, cultural assets.

We believe that deep cognizance of one’s homeland and its heritage will make the coming generations more caring, fostering their sense of responsibility.

«SOS մշակույթ» ծրագիրն իրականացվել է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի և դվվ ինթերնեյշնլ վրաստանյան մասնաճյուղի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորել է Եվրոպական միությունը:

SOS Culture project is implemented by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) in cooperation with dvv international - Georgia Country Office and Research on Armenian Architecture Foundation (RAA). The project is funded by the European Union.



EUROEAST
CULTURE

FPWC®
Foundation for the
Preservation of Wildlife
and Cultural Assets



dvv international
Institut für internationale Zusammenarbeit
des Deutschen Volkshochschul-Verbandes

Այս տղազրության բովանդակությունը որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

The views expressed in this publication do not necessarily reflect the views of the European Union.

Տղազրված է «Բյուրակն» տղառանում Printed in Byurakn Publishing-house
ԵՐԵՎԱՆ - 2013 - YEREVAN